ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» սեպտեմբերի 2015 թվական N 133-Ն

ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի դրույթներով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի <<Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը և Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագիծը հաստատելու մասին>> N 295-Ն որոշումը և Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասերի ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերը տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ.Ադամյան _____

Ա.Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2015 թ. Սեպտեմբերի 04-ի N 133-Ն որոշման

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրելու վարձավճարների մեկնարկային չափերի և պայմանների

N	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը) տարածագնահատման գոտին	Ծածկագիրը մակերեսը /քառ.մ/	Հողամասի նպատակային և գործառական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Տարեկան վարձավճարի մեկնարկային չափը /դրամ/	Ժամկետը /տարի/
1	Թբիլիսյան խճ. 5-րդ անցում N 9 11-րդ գոտի	08-001-0041-0012 6408.0	Բնակավայրերի ընդհանուր օգտագործման	Բարեկարգում, կանաչապատում	70000	5
2	Ռիժկովի փող. N 4/7 8-րդ գոտի	08-001-07520071 42.51	Բնակավայրերի ընդհանուր օգտագործման	Բացոթյա սրճարան	260000	1

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ **Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2015 թվական N 134-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ N 10/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետի «գ» ենթակետի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28042015-08-0015) Բագրատունյաց հրապարակի պուրակի մաս կազմող Բագրատունյաց հրապարակ N 10/2 հասցեի ընդհանուր օգտագործման գործառական նշանակությամբ 0.11821 (զրո ամբողջ տասնմեկ հազար ութ հարյուր քսանմեկ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով 20 (քսան) տարի ժամկետով օգտագործման տրամադրել՝ հողամասի գործառական նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու նպատակով:
2. Հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 650000 (վեց հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ.Ադամյան _____

Ա.Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ. Մխիթարյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» սեպտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» սեպտեմբերի 2015 թվական N 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 15/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով քաղաքացի Գագիկ Մերուժանի Ադամյանի կողմից Տիգրանյան փողոց N 15/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված պարսպի նկատմամբ Գյումրի համայնքի սեփականության իրավունքի ճանաչումը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14072015-08-0024 վկայական), ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշման 34-րդ, 34.2-րդ և 35-րդ կետերի պահանջները և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոց N 15/1 հասցեում ինքնակամ կառուցված 3.91 (երեք ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 36.20 (երեսունվեց ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 50 (հիսուն) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ պարիսպը կառուցած քաղաքացի Գագիկ Մերուժանի Ադամյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված պարսպի և հողամասի վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 36000 (երեսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ :

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա. Բաղրամյան		

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ. Մխիթարյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» սեպտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» սեպտեմբերի 2015 թվական N 136-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 29/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով քաղաքացիներ Լիդա Սաշիկի Ավագյանի և Բաբկեն Պավլեի Մկրտչյանի կողմից Մովսես Խորենացու փողոց N 29/11 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի շինության նկատմամբ Գյումրի համայնքի սեփականության իրավունքի ճանաչումը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07082015-08-0016 վկայական), ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշման 34-րդ, 34.2-րդ և 35-րդ կետերի պահանջները և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց N 29/11 հասցեում ինքնակամ կառուցված 15,47 (տասնհինգ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 10,08 (տասն ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացիներ Լիդա Սաշիկի Ավագյանին և Բաբկեն Պավլեի Մկրտչյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական շինության և հողամասի վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 35000 (երեսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ.Ադամյան _____

Ա.Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ. Մխիթարյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» սեպտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2015 թվական N 137-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի N 4/7 հասցեի շինությունները աճուրդային կարգով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին» N 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման 2-րդ կետի «3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա. Բաղրամյան		
Մ. Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ. Եդիգարյան		

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ. Մխիթարյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» սեպտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2015 թվական N 138-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 190-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ.Ադամյան _____

Ա.Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ. Եդիգարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ. Մխիթարյան _____

Վ. Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«04» սեպտեմբերի 2015 թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2015 թ. սեպտեմբերի 04 -ի N 138 -Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
(նոր խմբագրությամբ)

Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ՝

1. Աշոտ Գրիգորյան – Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովման բաժնի պետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

2. Ժաննա Պետոյան – Գյումրի համայնքի ղեկավարի օգնական,

Հանձնաժողովի անդամներ՝

3. Էդուարդ Բաղրամյան – Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման՝ սոցիալական ծառայությունների Գյումրի-2 տարածքային բաժնի պետ,
4. Վրույր Սուքիասյան – Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,
5. Գայանե Գալոյան – Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի սոցիալական աշխատող,
6. Կարինե Կուրղինյան - «Վորլդ Վիժն ՄԲԿ» Գյումրիի ՍԶԾ-ի համադասող,
7. Լիդա Ադամյան - Շիրակի մարզպետարանի ԸԿԵՊԲ-ի հոգեբան,
8. Թերեզա Գրիգորյան - Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գործակալ, մանկավարժ: